

Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 30-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող արտահերթ ընտրության նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
1	<p>Հավատարմագրման վերաբերյալ դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>ընտրություններ նշանակելու օրվանից հետո, սակայն ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ</p>	31, մաս 2	17.01.2025-ից մինչև 20.03.2025	Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններ
2	<p>Հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ</p>	31, մաս 2	մինչև 27.03.2025	Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններ
3	<p>Քվեարկության օրն ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու համար հավատարմագրվելու դիմումը և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ</p>	31, մաս 8	17.01.2025-ից մինչև 20.03.2025	Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸԾ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
4	<p>Հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>քվեարկության օրվանից մինչև 3 օր առաջ</p>	<p>31, մաս 8 ԿԸՀՈ 7-Ն 27.01.2022</p>	<p>մինչև 27.03.2025</p>	<p>Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ</p>
5	<p>Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ համայնքների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.</p> <p>ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 3 օր հետո</p>	<p>12, մաս 2</p>	<p>մինչև 20.01.2025</p>	<p>Լիազոր մարմին</p>
6	<p>Նախընտրական քարոզչություն իրականացնելու համար կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին եթերաժամ տրամադրող հեռուստառադիոհեռարձակում իրականացնող մասնավոր հեռուստաընկերությունները և ռադիոընկերություններն իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքն իրենց եթերով հրապարակում են.</p> <p>ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 5 օր հետո</p>	<p>20, մաս 6</p>	<p>մինչև 22.01.2025</p>	<p>Մասնավոր հեռուստա-ընկերություններ և ռադիոընկերություններ</p>
7	<p>Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրվում է.</p> <p>ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 7 օր հետո</p>	<p>19, մաս 3</p>	<p>մինչև 24.01.2025</p>	<p>Մարզպետներ</p>

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
8	<p>Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող՝ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով վահանակների, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.</p> <p>ընտրությունները նշանակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում</p>	21, մաս 6	մինչև 27.01.2025	Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններ կամ մարմիններ
9	<p>Ընտրական տեղամասերը կազմավորվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 25 օր առաջ</p>	128, մաս 7	մինչև 5.03.2025	Լիազոր մարմին, մասնակցությամբ համայնքի ղեկավարի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի
10	<p>Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	128, մաս 5	մինչև 5.03.2025 մինչև ժամը 18:00	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
11	<p>Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով գովազդային վահանակներում, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակներում քարոզչական պաստառներ տեղադրելու համար հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	21, մաս 6 128, մաս 5	մինչև 5.03.2025 մինչև ժամը 18:00	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
12	Քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշում ընդունվում է. նախընտրական քարոզչությունն սկսելուց 10 օր առաջ	21, մաս 3	մինչև 5.03.2025	Համայնքի ղեկավար
13	Համայնքի ղեկավարը սահմանում է տեղամասային կենտրոնները, կազմում է տեղամասային կենտրոնների ցանկը՝ նշելով տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը, ինչպես նաև տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների բնութագրերը և ներկայացնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հաստատմանը. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 25 օր առաջ	18, մաս 1, 2.1 128, մաս 7	մինչև 5.03.2025	Համայնքի ղեկավար
14	Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. սահմանվելուց հետո երկօրյա ժամկետում	52, մաս 1, կետ 3	մինչև 7.03.2025	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
15	10 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին համայնքի ղեկավարի որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է. որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում	21, մաս 4	մինչև 8.03.2025	Համայնքի ղեկավար
16	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ ընտրական տեղամասերի կատարվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ	44, մաս 5	մինչև 9.03.2025	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
17	Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ	12, մաս 1 128, մաս 7	մինչև 10.03.2025	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
18	Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. քվեարկության օրվանից 20 օր առաջ	13, մաս 3	10.03.2025-ին	Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող
19	Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքում տեղադրվում է. քվեարկության օրվանից 20 օր առաջ	13, մաս 2	10.03.2025-ին	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն
20	Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է. քվեարկության օրվանից 20 օր առաջ	13, մաս 2	10.03.2025-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
21	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է. քվեարկության օրվանից ոչ շուրջ, քան 25, և ոչ ուշ, քան 20 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	128, մաս 6	5.03.2025 - 10.03.2025 մինչև ժամը 18:00-ն	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
22	Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հերթական համարներ տրամադրվում են. գրանցման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը	140, մաս 2	11.03.2025-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
23	Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. քվեարկության օրվանից ոչ շուրջ, քան 20, և ոչ ուշ, քան 18 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	44, մաս 6	10.03.2025 - 12.03.2025 մինչև ժամը 18:00	Աժ խմբակցություն ունեցող կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ), ընտրատարածքային ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
24	<p>Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են.</p> <p>ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում</p>	131, մաս 2	մինչև 13.03.2025	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
25	<p>Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է.</p> <p>գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրը մեկ</p>	26, մաս 7	13.03.2025 -ից սկսած երեք աշխատանքային օրը մեկ	Առևտրային բանկեր
26	<p>Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են.</p> <p>գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում</p>	8, մաս 5	մինչև 15.03.2025	Թեկնածուներ
27	<p>Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները կուսակցության գույքի և եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են.</p> <p>գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում</p>	8, մաս 5	մինչև 15.03.2025	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ
28	<p>Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները Երևանում և հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող որևէ առևտրային բանկում նախընտրական հիմնադրամ պարտավոր են բացել.</p> <p>ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 5 օրվա ընթացքում</p>	26, մաս 1	մինչև 15.03.2025, որը վերջնաժամկետն է	Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
29	Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է. կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին	44, մաս 7	15.03.2025-ին ժամը 12:00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով
30	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է. ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը, ավարտվում՝ քվեարկության օրվանից 1 օր առաջ	19, մաս 1	15.03.2025 - 28.03.2025 մինչև ժամը 24:00	Ընտրողներ, թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
31	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից իրենց նախընտրական ծրագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած էլեկտրոնային ձևով ներկայացվելու դեպքում ԿԸՀ համացանցային կայքում տեղադրվում են. ներկայացվելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը	8, մաս 4	ներկայացվելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
32	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 14 օր առաջ	14, մաս 1	մինչև 16.03.2025	Ընտրողներ, Լիազոր մարմին
33	Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին կարող են ներկայացնել՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն	10, մաս 3.1	մինչև 18.03.2025 մինչև ժամը 14:00-ն	Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողներ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
34	Կուսակցությունների գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են. հայտարարագիրը ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում	8, մաս 6	մինչև 18.03.2025	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
35	Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ դաշինքի անդամ կուսակցություններն ինքնաբացարկի մասին դիմում կարող են ներկայացնել. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	137, մաս 2	մինչև 20.03.2025 մինչև ժամը 18:00-ն	Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
36	Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ընտրական տեղամասերի և համայնքների համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. քվեարկության օրվանից առաջ 10-րդ օրը	12, մաս 2 59, մաս 5	20.03.2025-ին	Լիազոր մարմին
37	Քվեաթերթիկների նմուշների սահմանվում են. քվեարկության օրվանից առաջ 10-րդ օրը	52, մաս 1, կետ 2 59, մաս 1 140	20.03.2025-ին	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
38	Քվեաթերթիկները տպագրվում են. քվեարկության օրվանից ոչ շուրջ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ	59, մաս 4, 5	20.03.2025 - 27.03.2025	Կենտրոնական ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
39	Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորման մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է. քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ	12, մաս 2	մինչև 22.03.2025	Լիազոր մարմին
40	Ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքում տեղադրվում է. քվեարկության օրվանից 7 օր առաջ	13, մաս 2	23.03.2025-ին	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն
41	Ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է. քվեարկության օրվանից 7 օր առաջ	13, մաս 2	23.03.2025-ին	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
42	Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են. նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը	28, մաս 1	24.03.2025-ին	Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ
43	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամն այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնել. մինչև քվեարկության օրվան նախորդող 5-րդ օրվա ժամը 18.00-ն	45, մաս 6 կետ 3	մինչև 25.03.2025 մինչև ժամը 18:00-ն	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, քարտուղար, հանձնաժողովի անդամ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
44	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասին մեկ կնիք հաշվարկով և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են.</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ</p>	60, մաս 4	25.03.2025 - 27.03.2025	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
45	<p>Ընտրողը քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին իրավունք ունի ներկայացնելու.</p> <p>քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը</p>	14, մաս 2	25.03.2025-ից մինչև 30.03.2025-ը, մինչև 20.00	Ընտրողներ, Լիազոր մարմին
46	<p>Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.</p> <p>հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում.</p>	28, մաս 4	մինչև 27.03.2025-ը և 6.04.2025	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
47	<p>Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.</p> <p>հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում</p>	29, մաս 5	մինչև 31.03.2025-ը	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
48	<p>Տեղամասային կենտրոնում փակցվող և տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից գործածվող ընտրողների ցուցակները՝ կազմված մատյանի ձևով՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, ինչպես նաև քվեարկության օրն ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են.</p> <p>քվեարկության օրվանից 3 օր առաջ</p>	12, մաս 3	27.03.2025-ին	Լիազոր մարմին

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
49	Ընտրողների ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է. Քվեարկության օրվանից 2 օր առաջ	13, մաս 4	28.03.2025-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ
50	Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է. Քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն	57, մաս 3	29.03.2025-ին մինչև ժամը 24:00	Համայնքի ղեկավար, տեղամասային ընտրական հանձնաժողով
51	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, ինքնաստանձվող դրոշմանիշերը, հանձնաժողովի կնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, տեխնիկական սարքավորումները հանձնվում են. Քվեարկության նախորդ օրը	59, մաս 6 60, մաս 5, 7	29.03.2025-ին	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
52	Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կապված բոլոր գործառնությունները դադարեցվում են քվեարկության օրվանից	27, մաս 7	30.03.2025-ից	Առևտրային բանկեր
53	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է. Քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին	64, մաս 1	30.03.2025-ին ժամը 07.00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով
54	Քվեարկությունն սկսվում է Քվեարկության օրը ժամը՝ 08:00-ից	56, մաս 1 65, մաս 1	30.03.2025-ին ժամը 08.00-ից	Տեղամասային ընտրական հանձնաժողով
55	Քվեարկությունն ավարտվում է. Քվեարկության օրը ժամը՝ 20:00-ին	56, մաս 1 68, մաս 1	30.03.2025-ին ժամը 20:00-ին	Տեղամասային ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
56	<p>Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է.</p> <p>ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամ հետո</p>	71, մաս 5	31.03.2025 մինչև ժամը 08:00	Տեղամասային ընտրական հանձնաժողով
57	<p>Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը, ընտրողների ցուցակների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը, արձանագրության մեկ քաղվածք, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեխնիկական սարքավորումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում</p>	71, մաս 9	31.03.2025 մինչև ժամը 10:00	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար
58	<p>Համայնքում ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են.</p> <p>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում</p>	74, մաս 1	31.03.2025 մինչև ժամը 14:00	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
59	<p>Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է.</p> <p>քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 20 ժամվա ընթացքում</p>	73, մաս 2	31.03.2025 մինչև ժամը 16:00	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
60	<p>Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել.</p> <p>քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն</p>	48, մաս 12, 14	31.03.2025 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 1.04.2025 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, վստահված անձ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
61	Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումն իրավասու անձը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում է. քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո 3 օրը՝ ժամը 11.00-ն	48, մաս 16	31.03.2025-ին ժամը 12.00-ից մինչև 2.04.2025 -ը՝ ժամը 11.00-ն	Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ, վստահված անձ, համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ, քվեարկությանը չմասնակցած ընտրող
62	Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումներն ընդունվում են քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն	48, մաս 16	31.03.2025-ին ժամը 12.00-ից մինչև 2.04.2025 -ը՝ ժամը 11.00-ն	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
63	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել. քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո 2 օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն	50, մաս 1	31.03.2025 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 1.04.2025 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն	Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, վստահված անձ, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ
64	Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումներն ընդունվում են. քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն	50, մաս 1	31.03.2025 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 1.04.2025 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
65	<p>Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են.</p> <p>վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված վերջնաժամկետի օրը՝ ժամը 14.00-ից, և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ ժամը 14.00-ին</p>	50, մաս 6	1.04.2025 ժամը 14:00-ից - 4.04.2025 մինչև ժամը 14:00	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
66	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.</p> <p>քվեարկության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում</p>	60, մաս 6	մինչև 2.04.2025	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
67	<p>Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.</p> <p>ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ</p>	28, մաս 1	մինչև 3.04.2025	Կուսակցություն, Կուսակցությունների դաշինք
68	<p>Համայնքում ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում՝ ընտրությունների արդյունքներն ամփոփող համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել.</p> <p>ընտրության արդյունքներն ամփոփելու համար սահմանված ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	48, մաս 13, 15	4.04.2025 մինչև ժամը 18.00-ն	Կուսակցություն, կուսակցությունների դաշինք
69	<p>Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.</p> <p>հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ</p>	29, մաս 5	մինչև 5.04.2025	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
70	<p>Համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է. քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը</p>	74, մաս 2	6.04.2025-ին	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
71	<p>Համայնքում քվեարկության արդյունքներն ամփոփվում և ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումն ընդունվում է. քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը</p>	74, մաս 6 141, մաս 2	6.04.2025-ին	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով